ՊԱՐԵՏԻ ՈՐՈՇՈՒՄ

17 մարտի, 2020 N 1

ՀԱՄԱՃԱՐԱԿԱԲԱՆԱԿԱՆ ԼԱՐՎԱԾ ԻՐԱՎԻՃԱԿ ՈՒՆԵՑՈՂ ԵՐԿՐՆԵՐԻ (ՏԱՐԱԾՔՆԵՐԻ) ՑԱՆԿԸ ԵՎ ԱՆՑԱԿԵՏՈՎ ԹՈՒՅԼԱՏՐՎՈՂ ՄՈՒՏՔԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏՈՒԿ ԴԵՊՔԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետությունում արտակարգ դրություն հայտարարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թ. մարտի 16-ի 298-Ն որոշման 2-րդ, 6-րդ և 7-րդ կետերով և որոշման հավելվածի 2-րդ կետի 2-րդ և 3-րդ ենթակետերով՝

1. Սահմանել՝
   Ա. այն երկրների (տարածքների) ցանկը, որտեղ առկա է համաճարակաբանական լարված իրավիճակ՝ համաձայն հավելվածի.
   Բ. Որպես ՀՀ կառավարության 16.03.2020թ. 298-Ն որոշման հավելվածի 2-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված առանձնահատուկ դեպք սույն որոշման հավելվածով նախատեսված երկներից բեռնափոխադրումներ իրականացնող տրանսպորտային միջոցի վարորդի և փոխարինող մեկ վարորդի մուտքը:
2. ՀՀ ազգային անվտանգության ծառայության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Էդուարդ Մարտիրոսյանին, ՀՀ Ոստիկանության պետի ժամանակավոր պաշտոնակատար Արման Սարգսյանին, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի նախագահ Դավիթ Անանյանին , ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի ղեկավար Հակոբ Ավագյանին՝ ապահովել սահմանված միջոցառումների իրականացումը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

Recoverable Signature

X

VERIFIED OCSP 17/03/20 15:47:42 GMT+4

Signed by: AVINYAN TIGRAN 3802890590

Տ.ԱՎԻՆՅԱՆ

Հավելված
Պարետի 2020 թ.
Մարտի 17-ի N 1 որոշման

ՑԱՆԿ

1. Չինաստանի Ժողովրդական Հանրապետություն
2. Իրանի Իսլամական Հանրապետություն
3. Հարավային Կորեա
4. Ճապոնիա
5. Իտալիա
6. Իսպանիա
7. Ֆրանսիա
8. Գերմանիա
9. Շվեյցարիա
10. Դանիա
11. Ավստրիա
12. Բելգիա
13. Նորվեգիա
14. Շվեդիա
15. Նիդերլանդներ
16. Միացյալ Թագավորություն